

ԱՆՏՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈԶ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Մայր Աթոռի նորապսակ Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ և Տ. Շնորհք աբեղաները, որոնք Ս. Էջմիածնի վանական խաղաղ մըթնոլորտում անցկացրել էին իրենց կանոնական քառասունքը «պահօք, աղօթիւք և եկեղեցական վարժիցն սերտողութեամբ», սույն թվականի փետրվար ամսին, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, Ավագ խորանի վրա մատուցեցին իրենց անդրանիկ ուխտի պատարագը և խոսեցին իրենց առաջին քարոզը:

Տ. Թորգոմ աբեղան իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց փետրվարի 4-ին և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց «Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպք և բարձր աշտարակ, ոսկեղէն բաժակք և ժիր մատռուակ. Հայաստանեայց հայր հոգևոր Բարթողիմէոս և Թադէոս...» բնաբանով:

Տ. Ասողիկ աբեղան իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց փետրվարի 11-ին և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց «Եւ եղիցին գործք արդարութեան խաղաղութեամբ, և կալցի արդարութիւն վիանգիստ, և յուսացեալքն եղիցին մինչև յաւիտեան» բնաբանով:

Տ. Շնորհք աբեղան իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց փետրվարի 18-ին և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց «Յանձն առեր վչարչարանս վասն Նոյեան տապանին, ի հրեշտակէն ընկալար վփայտ փրկութեան աշխարհի» բնաբանով:

Տ. ԹՈՐԳՈՄ ԱԲԵՂԱ ԽԱՐԱԶՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ

«Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպք և բարձր աշտարակ, ոսկեղէն բաժակք և ժիր մատռուակ. Հայաստանեայց հայր հոգևոր Բարթողիմէոս և Թադէոս...» (Շրկ. էջ 78):

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, մեր պատմահայր և շարականագիր Մովսես Խորենացու գրած վերոհիշյալ տողերը վերաբերում են Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալներին, որոնց անվան հետ սերտ կապ ունի Հայաստան աշխարհի լուսավորության պատմությունը:

Երեկ Հայաստանյայց Եկեղեցին կատարեց նրանց տոնախմբությունը: Նրանք Քրիստոսի անխոնջ աշակերտներից էին, որոնք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի համբարձումից հետո հաջորդաբար եկան Հայաստան և հանդիսացան Քրիստոնեական վարդապետության առաջին քարոզիչներն ու հաստատողները: Նրանց կողմից է, որ ցանվեցին քրիստոնեության առաջին սերմերը Հայաստանում, նրանք է, որ Ավետարանի լույսն ու ճշմար-

տությունները տարածեցին հեթանոսական խավարով պատված մարդկանց հոգիների մեջ: Հիսուս Քրիստոսի և նրա առաքյալների միակ նպատակն էր մարդկանց միտքն ու հոգին տարրապաշտությունից և սնոտիապաշտությունից ազատել դեպի Ամենաբարձրյալն ու դեպի հավիտենականը:

Ըստ հայկական ավանդության, Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալները նահատակվեցին Հայաստանում: Իսկ նրանց առաքելությունը շարունակեցին իրենց իսկ հետևորդները: Սուրբ առաքյալների և նրանց հետևորդների թափված արյունով էլ հաստատվեցին Հայ Եկեղեցու հիմքերը՝ «Արիւն մարտիրոսաց հիմն Եկեղեցւոյ»:

Առաքյալների գերեզմանները գտնվում են սյատմական Հայաստանի տարածքում: Ս. Թադեոսի գերեզմանի վրա կանգնեցված է Ս. Թադեի հայտնի վանքը՝ Արտավ գավառում, իսկ Ս. Բարթողիմեոսի գերեզմանի վրա՝ նշանավոր Ս. Բարթողիմեոս մայրավանքը՝ Աղբակ գավառում:

Հայոց Եկեղեցին, սիրելի ժողովուրդ, ըստ իր նախնական և հաստատուն ավանդության, իր սկզբնական հիմնադիրներն է ճանաչում Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալներին և նրանց անվանում Հայաստանի առաջին Լուսավորիչներ: «Առաքելության կնիքը, որը Հայոց Եկեղեցին միշտ յուրացրել է, և որ միշտ պաշտոնական գրությունների մեջ համարձակորեն հռչակել է, մի կողմից հաստատում է նրա սկզբնական և նախնական ծագումը, և մյուս կողմից հավաստում է նրա ուղղակի ինքնուրույն սկզբնավորությունը, առանց ուրիշ հնագույն եկեղեցու գործակցության»՝ գրում է մեր ժամանակների հայ եկեղեցական պատմության մեծագույն գիտակներից՝ ամենապատիվ Մաղաքիա Օրմանյան պատրիարքը իր «Հայոց Եկեղեցին» գրքում («Հայոց Եկեղեցին», 1952 թ., էջ 4):

Քրիստոնեությունը Հայաստան մուտք գործելու առաջին երեք դարերի ընթացքում հայ կռապաշտ թագավորների հալածանքների սատճառով գաղտնի էր պահվում երկրի ծածուկ անկյուններում: Հայ Եկեղեցին չուներ կանոնավոր կազմակերպություն, սակայն, հակառակ դրան, նա բարոյական միջոցներով իր սուրբ նպատակին դիմելով՝ օրըստ օրե ստվարացավ և տարածվելով արմատներ արձակեց:

Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալները իրենց քարոզությունների շրջանում ունեցան շատ հետևորդներ: Աստիճանաբար Հայաստանում ստեղծվեցին քրիստոնեական համայնքներ, և այդ համայնքներն էլ քրիստոնավանդ առաքելությունը առաջ տարան ընդհուպ մինչև 301 թվականը, երբ առաջին Հայրապետի՝ մեր երանելի Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ 3-րդ Արշակունի թագավորի ջանքերի շնորհիվ վերընձյուղվեցին Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների ցանած սերմերը, և քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց որպես աշխարհում առաջին պետական կրոն:

Սիրելի հավատացյալներ, Քրիստոսի լույսը Հայաստան բերեց հոգու և մտքի լուսավորություն, այն բացեց խավար ծալքերը հայ մտքերի, այն թեր տվեց՝ պանալու դեպի գիտության ոլորտները: Քրիստոսի լույսով պայծառացած Սուրբ Մեսրոպի հանճարը հրաշագործեց հայոց անմահ այբուբենը, Քրիստոսի լույսով գոտեպնդված՝ հայ մարտիկը իջավ Տղմուտի ափը՝ «Վասն Յիսուսի և վասն Հայրենեաց»: Քրիստոսի լույսով էր դարձյալ, որ Լուսավորիչ առաջին Հայրապետի տեսիլքի մեջ ուրվագծվեց այս սուրբ տաճարը, «Լուսոյ Խորան» Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ փարոսը հայության հոգևոր լուսավորության:

Սիրելի եղբայրներ և քույրեր, եղել են ժամանակներ, երբ Հայաստանը բաժանված կըրկվել է իր քաղաքական կյանքի ղեկավարությունից: Մեր ժողովրդի անցյալի գրեթե ողջ պատմությունը մինչև դարիս սկիզբը ներկայանում է իբրև մի կատարյալ անընդմեջ նահատակություն:

Բայց այսօր Հայ Եկեղեցին վայելում է խաղաղ օրեր, ունի գործելու լայն հնարավորություններ: Նրա հոգևոր դասը, իր գլուխն ունենալով աստվածընտիր և հայրենասեր Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ին, շարունակում է մեր երանաշնորհ հայրապետների ազգաշեն ու եկեղեցանվեր սուրբ գործը:

Եվ ես՝ համեստ սպասավորս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, այսօր իմ քահանայական անդրանիկ ուխտի պատարագն եմ մատուցում միածնաէջ այս սուրբ տաճարում: Ավելի քան տասը տարիներ ես սնվեցի, աճեցի և դաստիարակվեցի Ս. Էջմիածնի հոգեպարար մթնոլորտում, որի համար անհունորեն երախտապարտ եմ նախ իմ հոգևոր ծնողին՝ Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին՝ հավաստիացնելով Նրան հավատարիմ մնալ իմ սուրբ կոչմանը «բանիւ և գործով»: Իմ երախտագիտությունն եմ հայտնում նաև բոլոր այն ազնիվ հոգիներին, որոնք անցած տարիների ընթացքում նպաստեցին իմ հոգևոր ու մտավոր դաստիարակության գործին:

Եկեք, սիրելի եղբայրներ և քույրեր, մեր հոգեբուխ աղոթքներն առաքենք առ բարձրյալն Աստված, որ նա կայուն ու հարատև

խաղաղություն պարգևի մեր ալեկոծ մոլորակի բոլոր ծագերին: Թող Աստված միշտ անսասան ու անշարժ պահի մեր հավատքի խարիսխը հանդիսացող միածնաէջ այս սուրբ տաճարը, Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը ու նրա արժանընտիր Գահակալին՝ Տ. Տ. Վազգեն Ա առաքելաշավիղ Հայրապետին պարգևի քաջառողջություն և արկշաստություն, որպեսզի Նա կարողանա շարունակել Իր եկեղեցաշեն ու ալգանվեր գործերը՝ ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի և ի փառս մեր սիրելի Հայաստան աշխարհի:

«Թագաւոր երկնաւոր, վեկեղեցի քո անշարժ պահեա. և վերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան»: Ամեն:

Տ. ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ

«Եւ եղիցին գործք արդարութեան խաղաղութեամբ, եւ կալցի արդարութիւն վհանգիստ, եւ յուսացեալքն եղիցին մինչեւ յաւիտեան» (Եսայի ԼԲ 17):

Աստուծո ողորմությամբ և Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, ձեռամբ Տ. Ներսես եպիսկոպոսի, շուրջ քառասուն օրեր առաջ այս խնկյալ տաճարի սրբական կամարների տակ իմ հոգևոր երկու եղբայրների հետ միասին ստացա քահանայական օծում: Ընդունելով Քրիստոսի ծանր և քաղցր լուծը՝ լծվեցի մի վեհ գործի, այն է՝ անմնացորդ կերպով ծառայել հայ ժողովրդին, Հայ Եկեղեցուն: Եթե մարմին առած Փրկիչը քարոզեց Հրեաստանում, ապա մի ոգեղինիկ տեսիլքի համաձայն՝ Միածինը իջավ այս քաղցրիկ դաշտը, բիբլիական լեռան ստորոտին (որի վրա մի ժամանակ իր հանգիստն էր գտել Նոյան տապանը) և հիմնեց իր Եկեղեցին: Ահավասիկ այս սրբական տաճարը, որտեղ այժմ խմբված եք դուք, ներկայացնում է Հիսուս Քրիստոսի իջման վայրը: Այն օրվանից, երբ մեր սուրբ Հայրապետ Գրիգոր Լուսավորիչը հայ ազգը մկրտեց Քրիստոսի խաղաղության լույսով, մեր ժողովուրդը հավատարիմ մնաց մինչև այսօր նրա պատվիրանին: Քրիստոսի Ավետարանին ծառայելու եկան բազում սերունդներ: Մենք ևս կամեցանք լրացնել այդ շարքը: Մենք պատրաստ ենք ծառայելու մեր ազգին, որ դարեր շարունակ երազել է խաղաղություն և ապահովություն: Մեր անդրանիկ ուխտի պատարագի առիթով, հարմար նկատեցինք ձեզ հետ միասին, սիրելի հավատացյալներ, խաղաղության ձայնը հնչեցնել ի կողմանս բարության և հապահովություն ամենեցուն:

Քաղաքական այսօրվա հեղհեղուկ, ալեկոծ վիճակը աննախընթաց, եզակի երևույթ չէ: Պատմության ընթացքում մարդկությունը նման տագնապալի և վտանգավոր պահեր հաճախ է ապրել: Մարդկության առաջավոր մտածողներն ու առողջ բանականություն ունեցող ողջախոհ մարդիկ միշտ էլ քարոզել են, որ երջանիկ կյանքի ապահովության գլխավոր երաշխիքը խաղաղությունն է:

Մեկանից շուրջ երկու հազար և ավելի տարիներ առաջ, երբ Հրեաստանի պատմության թատերաբեմում հայտնվեցին մարգարեները, քաղաքական իմաստով աշխարհը խառնակ վիճակի մեջ էր: Նրանք սկսեցին իրենց խաղաղարար և արդարադատ պատգամները ուղղել: Այդ մարգարեների դասին էր պատկանում նաև Եսային, որն իր ժամանակի նշանավոր դեմքերից էր: Նա խաղաղության գործը այսպես էր պատկերացնում. «Եվ արդարության գործը կլինի խաղաղություն...»: Իր և բոլոր ժամանակների համար արտահայտված մի ճշմարիտ մտածում է սա: Այո՛, միայն ու միայն արդարության գործը կարող է լինել խաղաղություն: Խաղաղության մասին տիեզերամտիտ այս մարգարեությունը ուղղված է հանուր մարդկությանը, ի կողմանս բարության և հապահովություն ամենեցուն:

Խաղաղության պատգամներ մարդկության պատմության բոլոր շրջաններում էլ ղողանջել են:

Մարգարեն պատգամել է. «Եւ եղիցին գործք արդարութեան խաղաղութեամբ...»:

Հրեշտակները երգել են. «...Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»...

Տերը ավետարանել է. «Խաղաղութիւն ընդ ձեզ...»:

Եսայի մարգարեն արտաբերելով խաղաղության պատգամը՝ իր ժողովրդին գիտակցել էր տալիս, որ հոգեկան և ֆիզիկական հանգստություն կարելի է ձեռք բերել միայն արդարությամբ, որովհետև «արդարության գործը կլինի խաղաղություն...», և խաղաղության արդյունքը՝ հանգիստ ու ապահովություն:

Այսօր նույն մտածումն է հաճախում մեզ՝ քսաներորդ դարի այս վերջին քառորդին, երբ պատերազմի փոթորիկը ամեն վայրկյան պատրաստ է պայթելու: Սակայն վհատության և հուսահատության ամենամռայլ պահերին մարգարեի կայծակնացնցուղ պատգամը ամպրոպի նման թրատում է մեր հոգեկան երկինքը և ամպրոպից հետո կապույտի մեջ ծիածանագույն գրվում է. «Արդարության գործը կլինի խաղաղություն...»: Այնժամ մեր հոգին խաղաղվում է, թոթափում ենք

մեկնից ճնշիչ մթնոլորտը, լցվում ենք հավատով և ձայնակցելով հրեշտակներին՝ երգում ենք. «Փառք ի բարձունս Աստուծոյ և երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Մեծ է մարգարեի պատգամը: Եվ այդ պատգամը խաղաղությունն է: Չէ՞ որ խաղաղության մեջ են հոգիները ցնծում և բերկրում, հավատքն սկսում է բողբոջել ու ծաղկել: Խաղաղության մեջ է, որ մարդիկ սկսում են միմյանց սիրել: Արդարության գործը կլինի խաղաղություն, իսկ բարության գործը՝ արդարություն: Պողոս առաքյալը գրում է. «Ամեն բան փորձեցեք, բարին ամուր բռնեցեք» (Ա Թես. Ե 21):

Ի՞նչն է մեզ ստիպում այսօր վկայակոչելու մեծ մարգարեի վեհ պատգամներից մեկը. ժամանակը, այսօրվա տագնապալի իրավիճակը, իր նախօրինակը չունեցող սպառազինությունների մրցավազքն ու գաղափարական անհասկացողությունները: Հիշենք պատմությունից, որ մարդկության առաջին գյուտերից մեկը վենքի գյուտն է եղել, իսկ առաջին տեսությունը՝ խաղաղությունը, երանելի ու ցանկալի խաղաղությունը: Մեր երկրագունդը ավելի պատերազմներ է տեսել, քան խաղաղություն: Այսօր հանուր մարդկության երազանքն այն է, որ մի օր պատգամել է նույն մեծ մարգարեն. «Եւ ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս, եւ զսուինս իւրեանց ի մանգաղս, եւ ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր, եւ ոչ եւս ուսանիցեն տալ պատերազմ» (Ես Բ 4):

Խաղաղություն ցանկացող մարդկության առջև մեկ խնդիր է դրված՝ կատարել Մարգարեի պատվիրանը:

Մեր հոգեւոր և շնորհավարդ հայրապետները այնքան խորն են գիտակցել խաղաղության դերը հավատացյալ մարդու կյանքում, որ մեր եկեղեցական ծեսի մեջ մեծ տեղ են հատկացրել այդ գաղափարին: Խաղաղության աղոթքներով ու պատգամներով, երգերով ու քարոզներով են ջերմացրել նրանք հավատացյալների հոգիները:

Ահա թե ինչ մաղթանք է արվում Արևագալի ժամերգության մեջ. «Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան»:

Քրիստոնեությունը ամենից շատ խաղաղության վարդապետություն է, այդ վկայեցին հրեշտակները Փրկչի ծննդյան օրը, այդ հաստատեց Փրկիչը լեռան բարձունքից խոսած իր քարոզում, այդ է վկայում Փրկչի հաստատած խաղաղության Եկեղեցին:

«Երանի խաղաղարարաց...»:

Բյո՜ւր երանի խաղաղարարաց, որոնք լսում են խաղաղության ձայնը, որովհետև՝ «Խաղաղութեան ձայն հնչեցաւ»:

Խաղաղության Իշխանը երկնային լուսաձեմ բարձունքներից իջեցրեց իր հայրական պատգամը և աղաղակեց ի լուր մարդկության. «Խաղաղութիւն ամենեցուն...»:

Պատերազմի գոհասեղանին գոհ են մատուցվում մարդկային բոլոր սրբությունները: Պատերազմը ընկերային կյանքի աններդաշնակությունների հանրագումարն է:

Խաղաղությունը այն աղն է, որ համեմում է ողջ մարդկության կյանքը, կերտում նրա նկարագիրն ու բարոյականը: Իկուր չէ, որ մեր Տերը իր ձայնը լսելի դարձրեց ողջ մարդկության՝ «Խաղաղութիւն կիմ տամ ձեզ», իր արյան հեղմամբ, իր քավչարար հաշտության պատարագով, որպեսզի խաղաղության մեջ պտղաբեր դառնար մարդկային երջանկությունը:

Հայ ժողովուրդը, որպես պատարագվող գոհ, պատմության ընթացքում միշտ էլ իր լապմաչարչար հոգու աղերսանքն է ուղղել Բարձրյալին. «Տուր աշխարհիս խաղաղութիւն»: Այդ են ցանկանում աշխարհի բոլոր ժողովուրդները, մանավանդ հայ ժողովուրդը, որն իր գոյության ողջ ընթացքում երազել է միմիայն խաղաղություն և երբեք չի պատերազմել: Եթե պատերազմել է, ապա Տզմուտի ափին՝ Ավարայրում «վասն Հիսուսի և վասն հայրենեաց», եթե պատերազմել է, ապա Սարդարապատում «վասն իր փրկության»:

Սիրելի հավատացյալներ, կյանքում չկա ավելի վեհ գաղափար, քան խաղաղության գաղափարը, չէ՞ որ խաղաղության մեջ միայն կարելի է գտնել հանգիստ ու ապահովություն:

Եկեք միասին աղոթենք առ Աստված վասն խաղաղության և անվտանգության համայն աշխարհի: Ամեն:

Տ. ԾՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ

«Յանձն առեր վչարչարանս վասն Նոյեան տապանին,
Ի հրեշտակէն ընկալար վփայտ փրկութեան աշխարհի»
(Շարական, էջ 410):

Սիրելի հավատացյալներ,

Եթե դուք հետևում եք Հայաստանյայց Եկեղեցու ծիսակատարություններին, ապա գիտեք, որ անցնող պահոց շաբաթը կոչվում է Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի անվամբ՝ «Բարեկենդան Ս. Յակովբայ պահոց»:

Չեն հավանաբար ծանոթ է Ս. Հակոբ Հայրապետի անունը: Ս. Հակոբ Սքանչելագործ Հայրապետը (Սքանչելագործ է կոչվում, որովհետև բազմաթիվ հրաշքներ է գործել) Հայ Եկեղեցու կողմից ընդունված ամենահեղինակավոր ընդհանրական սրբերից մեկն է: Նա Դ դարի անձնավորություն է:

Ս. Հակոբ Մծբնա Հայրապետը ծնվել է ասորական Մծբին քաղաքում, ունի պարթևական ծագում և ըստ հայկական «Ճառընտիր» ժողովածուների՝ հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ կաթողիկոսի քրոջ որդին է: Մանկության և երիտասարդության տարիները անցկացրել է ուսումնառությամբ՝ ժամանակին մեծ հռչակ վայելած Մարուքե ճգնավորի հոգեվոր դաստիարակության ներքո: Այնուհետև քաշվել է անապատ՝ նվիրվելով աղոթքի, խոկումի և ճգնողական կյանքի: «Յայսմաւուրք» ժողովածուներում կարդում ենք, որ Ս. Հակոբ Հայրապետը իր ողջ կյանքի ընթացքում բնավ չի ճաշակել եփված կերակուր, երբեք չի նստել գրաստի կամ փոխադրական որևէ այլ միջոցի վրա, այլ իր անձը վարժեցրել է դժվարությունների և առաքինի վարքով ստացել երկնային շնորհներ:

320 թվականին Ս. Հակոբը ձեռնադրվել է Մծբինի եպիսկոպոս: Որպես ժամանակի հեղինակավոր անձնավորություններից մեկը, մասնակցել է Նիկիո առաջին տիեզերական ժողովին և արիոսական աղանդը բուռն կերպով դատապարտողներից մեկն է եղել: Նրա վայելած մեծ հռչակի մասին է վկայում Բյուզանդիայի Կոստանդիանոս կայսեր հետևյալ խոսքը. «Երեք սյուներ կան երկնքի և երկրի միջև. Անտոնը՝ Եգիպտոսի մեջ, Սեղբեստրոսը՝ մեզ մոտ, և Ս. Հակոբը՝ Մծբինի մեջ»:

Սիրելի հավատացյալներ, Ս. Հակոբին վերագրվում են բազմաթիվ հրաշագործություններ: Պատմվում է, որ նրա կենարար աղոթքներից նույնիսկ մեռյալներն են հարություն առել: Բայց Ս. Հակոբ Սքանչելագործ Հայրապետը առավել սիրելի է մեզ՝ հայերիս, ոչ միայն նրա համար, որ ընդհանրական Եկեղեցու նշանավոր հայրերից է, ոչ միայն նրա համար, որ բազում հրաշագործություններ է կատարել, և վերջապես ոչ միայն նրա համար, որ Ս. Գրիգոր Լուսավորչի քրոջ որդին է, այլ նրա անձը հատկապես սիրելի է մեր ժողովրդին իր կյանքի հետ կապված հետաքրքրական մի դրվագի պատճառով:

Դուք գիտեք, սիրելի հավատացյալներ, որ երբ տեղի ունեցավ համաշխարհային մեծ ջրհեղեղը, ինչպես կարդում ենք Աստվածաշնչի Ծննդոց գրքում, Նոյ Նահապետը, որ միակ արդար մարդն էր աշխարհի երեսին, Աստուծո հանձնարարությամբ մի հսկա նավ պատրաստեց իր ընտանիքի համար, և երբ ջուրը պատում էր ողջ երկրագունդը, Նոյի տապանը կանգ առավ Արարատի գագաթին:

Արարատ լեռը փաստորեն հանդիսանում է աշխարհի մայրը, քանի որ նրանով է, որ մարդկությունը փրկվում է վերջնական բնաջնջումից և այնուհետև նորից շարունակում է բազմանալ:

Ըստ ավանդության՝ Ս. Հակոբ Հայրապետը ցանկանում է բարձրանալ այդ բիբլիական սրբազան լեռը և նրա գագաթից իջեցնել Նոյան տապանի մի փոքրիկ մասունք:

Հակառակ իր անկոտրում կամքին, Ս. Հակոբ Հայրապետը չի կարողանում բարձրանալ մինչև Արարատի գագաթը, դժվար վերելքից հոգնած՝ նիրհում է կես ճանապարհին: Եվ ահա Աստուծո հրամանով հրեշտակը Նոյան տապանից պոկում է մի մասունք և հանձնում Ս. Հակոբին: Շարականագիր Ս. Ներսես Շնորհալին էլ հետևյալ տողերով է եզրափակում Ս. Հակոբ Մծբնա Հայրապետին ձոնած իր շարականը, որը և դարձրել ենք մեր քարոզի բնաբանը.

«Յանձն առեր կչարչարանս վասն Նոյեան տապանին,
Ի հրեշտակէն ընկալար կփայտ փրկութեան աշխարհի»:

Նոյան տապանի հիշյալ մասունքն է ահա, որ ցուցադրվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանում և Հայ Եկեղեցու ամենանվիրական սրբություններից մեկն է անկասկած:

Այո, Արարատը, որ աշխարհի մայրն է, որ ողջ մարդկության սեփականությունն է, ավելին է մեզ՝ հայերիս համար: Արարատը, որ մեր ժողովրդի գոյության խորհրդանիշն է, որ մարմնացյալ կերպարն է մեր ժողովրդի անկոտրում ոգու, հիրավի, սուրբ լեռ է, և սուրբ է նրա հետ կապված ամեն մի հիշատակ: Ահա թե ինչու ավելի քան մեկ և կես հազարամյակ հայ ժողովուրդը որպես սրբություն պահել է Նոյան տապանի մասունքը, ահա թե ինչու Հայաստանյայց Եկեղեցին ամեն տարի տոնում է Ս. Հակոբի հիշատակը:

Արարատը մեր ինքնությունն է, մեր էությունը, որովհետև ամեն մի հայ այն կրում է իր հոգու մեջ, որովհետև այն զարդարում է արյուն-ավերմունքներից հարություն առած մեր ժողովրդի նորաստեղծ Հանրապետության արևավառ գերբը, որովհետև ամեն մի հայ, երբ իր տխուր հայացքն է նետում այդ սպիտակաթույր լեռան արևաշող բարձունքներին, մի պահ հիշում է իր ժողովրդի անցյալն ու դժբախտ ճակատագիրը:

Սիրելի հավատացյալներ, մեր ժողովրդի համար կա նաև մեկ ուրիշ, ոչ պակաս նվիրական ու կենսատու խորհրդանիշ, քան

Արարատն է: Դա մի հաստատություն է, որ նույնպես գտնվում է յուրաքանչյուր հայի հոգու մեջ, որ տեսանելի է աշխարհի բոլոր այն ծագերից, որտեղ թեկուզ և մեկ բաբախող հայի սիրտ կա, մի հաստատություն, որ իր խնկաբույր պատերի մեջ խտացրել է մեր ողջ անցյալը, որ հանդիսանում է անքակտելի կապը Մայր Հայրենիքի և ողջ Սփյուռքի, հզոր կռվանը մեր ինքնության և գոյատևման: Այդ հաստատությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է, այդ հաստատությունը այս նվիրական տաճարն է, որտեղ գտնվում եք դուք այժմ: Իսկ գիտե՞ք, որ այս տաճարի կառուցումը դարձյալ կապված է Արարատ լեռան հետ: Ագաթանգեղոսի Պատմության գրքում գրված է, որ Հայոց Տրդատ թագավորը, որ հայտնի էր իր ահռելի, գերմարդկային ուժով, քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո բարձրանում է Մասիսի գագաթը, այնտեղից պոկում է հսկա ժայռաբեկորներ և բերում տաճարի կառուցման վայրը: Այդ քարերն են, որ դառնում են հիմքերը այս սուրբ տաճարի, որի միածնաէջ խորանից մատուցում եմ իմ անդրանիկ պատարագը, և ձեր առջև, սիրելի հավատացյալներ, այս քրիստոսահիմն Ս. Խորանի առջև, մեր լուսաբնակ նախնյաց հիշատակի և Հայաստանյայց Եկեղեցու սպասավորների առջև՝ ի գլուխ ունենալով ազգիս Հայրապետ Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսը, նաև՝ Արարատի և նրա գագաթը բարձրացած Ս. Հակոբի հիշատակի առջև ուխտում եմ լինել նվիրյալ սպասավորը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, ավանդ կավակը Մայր Հայրենիքի և մեր ժողովրդի:

Այժմ ես հուզմունքով եմ հիշում այն պահը, երբ 40 և ավելի օրեր առաջ իմ երկու հոգևոր եղբայրների հետ ստացա քահանայական ձեռնադրություն և օծում՝ ձեռամբ Տ. Ներսես եպս. Պոլատյանի: Այս առթիվ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինին, որ արժանի գտավ իմ նվաստ անձը քահանայական կոչման: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Տ. Ներսես եպս. Պոլատյանին, որ իր հայրական աջով և սուրբ մյուռոնով մեզ նոր՝ հոգևոր ծնունդ և կյանք պարգևեց: Շնորհակալություն նաև բոլոր նրանց, ովքեր տարիների ընթացքում նպաստեցին մեր ուսումնառության և հասունացման գործին:

Հիրավի, ի՞նչ կա ավելի վեհ, ի՞նչ կա ավելի գեղեցիկ, քան անձը նվիրել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն, Ս. Էջմիածնին, որը մեր հոգևոր մայրն է, մեր էությունը և հոգու անբաժանելի մասնիկը, ինչպես Արարատը: Միայն թե այդ նվիրումը լինի անկեղծ:

Վեհափառ Տեր, «Շնորհեա ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղութեամբ պահեցին կպատուիրանս քո»: